Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-Դիմում (Ձեւ 1),

-Մեկ լուսանկար 3x4 չափի,

-Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- Անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

-Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 28-ից մինչև մարտի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. մարտ-ի 19-ին՝ ժամը 14:00-ին, Ավանի Աղբյուր Սերոբի անվան միջնակարգ դպրոցում.** հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Ավան բնակավայր, 1-ին փողոց, շենք՝ 16:Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 093 23-97-02: